Իգոր Կարապետյան[*]
Երևանի պետական համալսարան
Ռուզաննա Գևորգյան[†]
Երևանի պետական համալսարան

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ABSTRACT

TECHNOLOGY OF TEACHING ANALYTICAL READING OF LITERARY TEXT

In a philologically oriented English language course, various technologies for analytical reading of literary text are used. There are various technologies of analytical reading: technologies of fast, rational, dynamic reading, technology of developing critical thinking, technology of using various reading strategies, technology of reflective reading at different levels, technology of speech analysis, etc.. When developing and organizing each course lesson, the problem of concretizing the technology of analytical reading of a literary text arises.

It is important that teachers constantly develop their methodological arsenal and study the technologies of analytical reading. Consistent reading of foreign language fiction is a necessary and important condition for using the technologies mentioned. Besides, both teachers and students should read works of art. It is effective to present a reading list to students at the

[*]e-mail: igorkarapetian@gmail.com
[†]e-mail: ruzanna_gevorgyan@ysu.am

Received: 03/06/2024
Revised: 10/06/2024
Accepted: 12/06/2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2024

beginning of the course. Besides, it is effective when the student himself chooses from the mentioned list the minimum that he should read. It is effective when reading each literary work begins with an awareness of a clear purpose and problems of reading.

To use the technology of cognitive-discourse analytical reading demands to carry out serious and consistent preparatory work. It is important in this sense, to study both linguistic and literary works in native and foreign languages.

Key words: rational reading, dynamic reading, critical thinking, reading strategy, synthetic reading, reflective reading, cognitive-discursive technology, literary text.

РЕЗЮМЕ

ТЕХНОЛОГИЯ ОБУЧЕНИЯ АНАЛИТИЧЕСКОМУ ЧТЕНИЮ ХУДОЖЕСТВЕННОГО ТЕКСТА

В филологически ориентированном курсе английского языка используются различные технологии аналитического чтения художественного текста. Существуют различные технологии аналитического чтения: технологии быстрого, рационального, динамического чтения, технология развития критического мышления, технология применения различных стратегий чтения, технология рефлексивного чтения на разных уровнях, технология анализа речи и.т.д.. При разработке и организации каждого курса, урока возникает проблема конкретизировать технологию аналитического чтения художественного текста.

Важно, чтобы преподаватели постоянно развивали свой методический арсенал, изучали выше упомянутые технологии. Последовательное чтение иноязычной художественной литературы является необходимым и важным условием использования упомянутых технологий. Более того, и преподаватели, и студенты должны читать произведения искусства. Эффективным является представление списка литературы для чтения студентам в начале курса. Кроме того, эффективно, когда студент сам выбирает из упомянутого списка тот минимум, который ему следует прочитать.

Целесообразным является, когда чтение каждого литературного произведения начинается с осознания ясной цели и проблем чтения.

Для использования технологии познавательно-речевого аналитического чтения необходимо провести серьезную и последовательную подготовительную работу. В этом смысле важно изучение как лингвистических, так и литературных работпроизведений на родном и иностранных языках.

Ключевые слова: рациональное чтение, динамическое чтение, критическое мышление, стратегия чтения, синтетическое чтение, рефлексивное чтение, когнитивно-дискурсивная технология, художественный текст.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության տեխնոլոգիաների զարգացման գործընթացը: Սահմանվում է «տեխնոլոգիա» հասկացությունը: Պատմահամեմատական վերլուծության արդյունքում ներկայացվում են արագ ընթերցման, ռացիոնալ ընթերցանության, դինամիկ ընթերցման, քննադատական մտածողության զարգացման, ընթերցանության տարբեր ռազմավարությունների կիրառման, «CHANCE» արագ ընթերցման, ճկուն, սինթետիկ ընթերցանության, տարբեր մակարդակներում ռեֆլեքսիվ ընթերցանության, ճանաչողական-խոսութային, խոսութային վերլուծության տեխնոլոգիաները, բացահայտվում է դրանց առանձնահատկությունները գեղարվեստական տեքստ վերլուծական ընթերցանության տեսանկյունից:

Բանալի բառեր. ռացիոնալ ընթերցանություն, դինամիկ ընթերցանություն, քննադատական մտածողություն, ընթերցանության ռազմավարություն, սինթետիկ ընթերցանություն, ռեֆլեքսիվ ընթերցանության, ճանաչողական-խոսութային տեխնոլոգիա, գեղարվեստական տեքստ:

Ներածություն. օտար լեզուների ուսուցման տարբեր մեթոդական համակարգերում տարբեր տեսանկյուններից քննության է առնվել

գեղարվեստական տեքստի ընթերցանության ուսուցման մեթոդների, ձևերի, հնարների, ընդհանուր առմամբ տեխնոլոգիայի ընտրության հիմնախնդիրը: Ակնհայտ է, որ թե՛ ուսուցիչները, թե՛ դասախոսները կիրառում են որոշակի ընթերցանության տեխնոլոգիա: Այլ հարց է, թե նրանք ինչ մեթոդական, մեթոդաբանական գիտելիքներ ունեն, ինչքան և ինչպես են գիտակցում ընթերցանության տեխնոլոգիայի ընտրության կարևորությունը, և ընդհանրապես ինչ տեխնոլոգիական կոմպետենցիայի ձևավորվածության մակարդակ են ապահովում:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել գեղարվեստական տեքստի վերլուծական արդյունավետ համարվող տեխնոլոգիաները և առանձնացնել այն տեխնոլոգիան, որն ավելի արդյունավետ է կիրառել բանասիրական կողմնորոշման անգլերենի դասընթացում արդի փուլում:

Հետազոտության նորույթն այն է, որ պատմահամեմատական, բաղադրիչային, գործառական վերուծությամբ բացահայտվել են ճանաչողական-խոսութային վերլուծության տեխնոլոգիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, հիմնավորվել է նրա արդյունավետությունը բանասիրական կողմնորոշման անգլերենի դասընթացում կիրառելու նպատակահարմարության տեսանկյունից:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Ուսումնասիրվել են արագ ընթերցման, ռացիոնալ ընթերցանության, դինամիկ ընթերցման, քննադատական

մտածողության զարգացման, ընթերցանության տարբեր ռազմավարությունների կիրառման, «CHANCE» արագ ընթերցման, ճկուն, սինթետիկ ընթերցանության, տարբեր մակարդակներում ռեֆլեքսիվ ընթերցանության, ճանաչողական-խոսութային, խոսութային վերլուծության տեխնոլոգիաները, հիմնավորվել է ճանաչողական-խոսութային տեխնոլոգիայի արդյունավետությունը թե՛ գեղարվեստական տեքստի բովանդակությունը հասկանալու, թե՛ այն վերարատդրելու, թե՛ լեզվաբանական, թե՛ գրականագիտական վերլուծության ընթացկարգերի կիրառման տեսանկյուններից։

Հետազոտության գործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքները կարող են հաշվի առնել իրենց գործնական աշխատանքի ընթացքում թե՛ անգլերենի ուսուցիչները, թե՛ դասախոսները, թե՛ այն ուսանողները, ովքեր ընթերցում և վերլուծում են օտարալեզու տարբեր գեղարվեստական տեքստեր։

Հետազոտության հիմնախնդիրը լուծելուն նպաստել են Օ. Ա. Անդրևի, Վ. Ա. Բորոդինայի, Մ. Յու. Վագանովայի, Մ. Ա. Գոլովանեվայի, Լ.Ա. Ա. Դարինսկայի, Գ. Կ. Սելեվկոյի, Լ. Ջ. Ֆիլլիպսի, , Լ. Վ. Անդերսոնի, Դ. Ռ. Կրաստվոլի, Բ. Բլումի, Դ. Ստանլիի, Ռ. Պաուլի, Լ. Ելդերի և այլոց աշխատանքները։

Ակնհայտ է, որ թե՛ օտար լեզվի ուսուցիչները, թե՛ դասախոսները հիմնականում կազմակերպում են գեղարվեստական գրականության ընթերցանության ըստ տվյալ դասընթացում կիրառվող ուսումնամեթոդական ձեռնարկների պահանջների, ըստ շրջանառվող դասագրքերի առաջադրանքների։ Դրական միտում է

այն, որ ժամանակակից ուսումնամեթոդական գրականությունը հիմնականում արտացոլում է հաղորդակցական-ճանաչողական մոտեցման շրջանակներում ձևավորված սկզբունքների բովանդակային առանձնահակությունները։

Դրական միտում է նաև այն, որ օտար լեզվի մասմագետները բավականին լավ են տիրապետում ընթերցանության միջոցով քննադատական մտածողության զարգացման գործիքակազմին, և համապատասխան մեթոդական ցուցումները, առաջարկությունները կարող են հիմնովին փոխել գեղարվեստական տեքստի ընթերցանության տրամաբանությունը, ընթացակարգերը, նրա հետ աշխատանքի մեթոդիկան։

Խնդիր է դրվում ճիշտ ընտրել արդյունավետ ընթերցանության ուսուցման տեխնոլոգիա, որը ներառում է համապատասխան մեթոդների, ձևերի, հնարների, ընթացակարգերի համախումբ։ Հունարենից թարգմանված «տեխնոլոգիա» տերմինը նշանակում է «հմտության և արվեստի ուսումնասիրություն» (Селевко 1998: 7)։ Անգլալեզու մեթոդական գրականության մեջ դժվար է գտնել «տեխնոլոգիա», եզրույթը, քանի որ այն հիմնականում կիրառվում է ուսուցման տեխնիկական միջոցների, առավելապես հեռահաղորդակցական ուսուցողական նպատակներով օգտագործելու տեսանկյունից։

Ընթերցանության արդյունավետության բարձրացման տեխնոլոգիան ենթադրում է տեքստի հետ աշխատելու նոր մեթոդները, որոնք կարող են հիմնովին փոխել ողջ կրթական

գործընթացը նոր ուսուցման հնարների, ձևերի, ռազմավարությունների կիրառման համատեքստում (Baганова 2010: 12-24):

Կարևոր է գեղարվեստական տեքստի ընթեցանության տեխնոլոգիայի ընտրության գործընթացնում հաշվի առնել այն տեխնոլոգիաները, որոնք օտար լեզուների մեթոդիկայի զարգացման տարբեր փուլերում աչքի են ընկել իրենց արդյունավետությամբ: Նախորդ դարի 60-70 -ական թվականներին մեթոդիստները սկսում են կիրառել արագ ընթերցման տեխնոլոգիան (Андреев 2007):

«Արագ ընթերցում» տերմինը շրջանառության մեջ է մտնում 1950-ականների վերջին դպրոցի ուսուցչուհի Էվելին Վուդի կողմից: Նա փորձում էր հասկանալ, թե ինչու որոշ մարդիկ բնականաբար ավելի արագ են ընթրեցում, որոշ մարդիկ դանդաղ: 1958-ին, իր դեն նետած գրքի էջերը մաքրելիս, նա նկատում է, որ իր ձեռքի ջնջող շարժումը էջի վրայով գրավում իր աչքերի ուշադրությունը և օգնում է նրանց ավելի սահուն ընթերցել: Այնուհետև նա ձեռքը օգտագործում է որպես արագացուցիչ: Վուդն առաջին անգամ ուսուցանել է նշված մեթոդը Յուտայի համալսարանում, նախքան այն հանրությանը ներկայացնելը որպես Էվելին Վուդի ընթերցանության շարժընթաց (Stanley 1994: 40): Ակնհայտ է, որ անգամ կարճ պատմվածքներն ընթերցելիս դժվար է կիրառել սույն տեխնոլոգիան: Այն արդյունավետ է կիրառել թռուցիկ ընթերցանության ընթացքում:

70-80-ական թթ. 20-րդ դարում Մ.Զիգանովը հիմք է դնում «ռացիոնալ ընթերցանության դպրոցին», որը ենթադրում է

սովորողների ֆիզիկական և մտավոր ջանքերի առավելագույն տնտեսում և տեքստի բովանդակության լուսաբանման առավելագույն արագություն: Սույն տեխնոլոգիան ուղղված է տրամաբանական գործողությունների կիրառմանը տեքստի ստեղծագործական ընկալման և դրա մեկնաբանման դժվարությունները հաղթահարելուն: Գեղարվեստական գրականության ընթերցանության ուսուցման տեսանկյունից կարևոր է այն, որ Մ. Ա. Զիգանովը կենտրոնանում է ռեֆլեքսիվ դժվարությունների վրա. մասնավորապես նրանք կիրառում են տեքստին հարցեր տալու և ընթերցանության նպատակը ձևակերպելու կարողությունը (Зиганов 2008):

Գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության տեխնոլոգիայի զարգացման կանոր փուլ է Ս.Մ.Բորոդինի դինամիկ ընթերցման տեխնոլոգիան, որը 90-ական թթ. դառնում է ակմեոլոգիական ընթերցանության զարգացման հիմք: Խնդիր է դրվում ընթերցանություն կազմակերպել «ակմե» մակարդակում, այսինքն՝ ապահովել ընթերցանության բարձրագույն մակարդակ: Ընթերցանության զարգացման ակմեոլոգիական տեխնոլոգիան ենթադրում է իրականացնել ակտիվ և բարձր արդյունավետություն ապահովող ընթերցանություն, որը հիմնված է ընթերցողի անձի զարգացման վրա: Տեխնոլոգիան իրականացվում է ինտերակտիվության սկզբունքով: Այն ապահովում է ընթերցողի ստեղծագործական ազատությունը տեղեկատվության յուրացման հարցում: Այն միտված է ընթերցանության ճկուն

ռազմավարությունների մշակմանը, դրա արտադրողականության բարձրացմանը, տեքստի հետ աշխատելու վերլուծական և սինթետիկ տեխնիկայի յուրացմանը, ընթերցվածի նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորմանը և ներկայացման բովանդակության և բնույթի միասնության մեջ տեքստը տեսնելու կարողությունների ձևավորմանը : Փաստորեն ակմեոլոգիական ընթերցանության հեղինակներ Վ. Ա. և Ս. Մ. Բորոդիններն օգտագործում են տեքստի իմաստային ընկալման ալգորիթմը և գրական տեքստի վերլուծության մեթոդը: Առաջարկվում է կիրառել տարատեսակ վարժություններ, բանավոր և դիդակտիկ խաղեր՝ «Բառեր-ուղեցույցներ», «Շիֆրորգրամներ», «Կոտրված նախադասությունների վերականգնում», «Ցրված ասացվածքների վերականգնում» և այլն (Бородина 2006):

Գրական տեքստի վերլուծական ընթերցանության նոր փուլ է նախորդ դարի 90-ական թվականները, երբ մեթոդիստները մշակեցին ընթերցանության միջոցով քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան: Քննադատական մտածողության միջոցով հեղինակը հասկանում է որակների և հմտությունների մի շարք, որոնք որոշում են ընթերցողի հետազոտական մշակույթի բարձր մակարդակը: Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան կիրառելով, խնդիր է դրվում ձևավորել աշխարհի նկատմամբ ամբողջական վերաբերմունք, որի հիմքում ընկած է դինամիկ, սակայն բովանդակալից դիրքորոշում: Տեխնոլոգիայի կիրառման փուլերն են՝

մարտահրավեր (տվյալ թեմայի վերաբերյալ առկա գիտելիքների թարմացում), ըմբռնում, ռեֆլեքսիա կամ անդրադարձ: Օգտագործվում են «Կանգառներով ընթերցում», «Սովորական պատկերներ», «Ես գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորել եմ» և այլ ռազմավարությունները (Загашев 2001: 56 – 59):

Ընթերցանության միջոցով քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան նոր բովանդակային բնութագրեր ձեռք բերեց Բ. Բլումի տաքսոնոմիայի տեսության շրջանառության մեջ մտնելուց հետո (1956): Բլումը և նրա համահեղինակները սահմանեցին քննադատական մտածողությունը որպես հետազոտության միջոցով գիտելիք ձեռք բերելու կարողություն, որը տեղի է ունենում գիտելիքի, ըմբռնման, կիրառման, վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակներում (Anderson, Krathwohl, & Bloom, 2001: 352):

Պաուլը և Էլդերը հայտարարում են, որ քննադատական մտածողությունը ենթադրում է գնահատելու և վերլուծելու ունակություն (Paul & Elder 2007: 1–21):

XXI դարի 2000-ականների սկզբին Ն.Ն.Սմետաննիկովան ներկայացնում է ընթերցանության դասավանդման ռազմավարական մոտեցումը: Դրա էությունն այն է, որ խնդիր է դրվում կրթել մարդուն այնպես, որ նա, հիմնվելով ընթերցանության տարբեր ռազմավարությունների յուրացման վրա, իր ողջ կյանքի ընթացքում կկարողանա տարբեր նպատակներով տարբեր նյութեր ընթերցել տարբեր լեզուներով: Գիտնականը նշում է կարդալու

հետևյալ դժվարությունները՝ տեքստից դուրս գտնվող տեղեկատվությունը «կորզելու» անկարողություն, հարակից ոլորտներից տեղեկատվություն օգտագործելու, տեքստը մեկնաբանելու, դրա նկատմամբ քննադատական վերաբերմունք ձևավորելու և այլն: Նրա դիտարկմամբ՝ զգալի դժվարություններ են առաջանում հակասական, այլընտրանքային տեսակետներով տեքստերի ընթերցման, տեղեկատվության միակցման և ամփոփման, ընդհանուր տեղեկատվական պատկերի մեջ հատվածներ կազմելու, նյութի գնահատման, եզրակացությունների ձևակերպման, վերլուծելու, սինթեզելու, համեմատելու և վարկածներ առաջ քաշելու պատճառով (Сметанникова 2005):

Ընթերցանության ռազմավարությունները հավասար չեն ալգորիթմներին, դրանք թույլ են տալիս շեղումներ, տատանումներ և տարբեր մարտավարություններ: Հեղինակի նկարագրած ռազմավարություններն օգնում են հաղթահարել որակավորման, բառապաշարային և ռեֆլեքսիվ ընթերցանության դժվարությունները:

2000-ականների սկզբին. XXI դարում մշակվում է «CHANCE» արագ ընթերցման ճկուն տեխնոլոգիան՝ նոր իմաստների վերլուծության սանդղակ, որը պատկանում է հեղինակային թիմին (Ն. Լ. Միշկինա, Լ. Վ. Կուշնինա, Ի. Վ. Բելյաևա, Լ. Կ. Գեյխման, Ն. Ն. Պերչատկինա): Տեխնոլոգիայի նպատակը. վերլուծական-սինթեզող ստեղծագործական մտածողության և ընթերցանության մեջ պրոֆեսիոնալիզմի զարգացում, տեքստի արագ ընկալման

տեխնիկայի մշակման միջոցով, ներառյալ ոչ միայն գիտակցությունը, այլև ենթագիտակցությունը բարդ մտավոր խնդիրների լուծման համար: Ճկուն, արագ ընթերցումը հեղինակների տեսանկյունից ոչ միայն բոպեում 3300 նիշ և ավելի արագությամբ կարդալու, տեղեկատվություն ընկալելու և հիշելու, այլ նաև ուրիշի գաղափարի էությունը արագ ըմբռնելու, գնահատելու ունակությունը:

Վերլուծական ընթերցանությունը տարբեր դասընթացներում տարբեր նպատակներ է հետապնդում: Անգլերենի ուսուցումը հումանիտար ուղղվածության և անգլերենի մասնագիտական դասընթացներում ունի ընդհանուր և տարբերակիչ կողմեր: Սակայն վերլուծական ընթերցանությունը հատկապես ընկալողական-վերլուծական մակարդակում համարյա նույն նպատակներն է հետապնդում: Դրանք են՝

. հարստացնել ուսանողների բառապաշարը,

. զարգացնել և կատարելագործել ընթերցանության և խոսողության հմտությունները և կարողությունները,

. զարգացնել տեքստի լեզվաբանական/ոճաբանական/ վերլուծության հմտությունները,

. զարգացնել թարգմանության հմտությունները:

Վերլուծական ընթերցանության կազմակերպման կարևոր պայման է այն, թե ինչ կարողություններ և հմտություններ է անհրաժեշտ ձևավորվել ուսուցման գործընթացում: Հիմնականում ապագա բանասերները պետք է կարողանան

- ընթերցել, հասկանալ տեքստը, քաղել դրանից համապատասխան տեղեկատվություն,
- թարգմանել տեքստը,
- իրականացնել լեզվաբանական վերլուծություն։

Վերլուծական ընթերցանության ժամանակ կարևորվում է հատկապես լեզվաբանական վերլուծության դերը, քանի որ, ինչպես Ե. Ս. Կուբրյակովան է նշում, «լեզվաբանական վերլուծության նպատակն է դառնում ամեն մի լեզվական միավորը, ձևը, կարգը ներկայացնող գիտելիքների, կարծիքների, գնահատականների կառուցվածքների մանրամասն նկարագրությունը և բացահայտումը» (Кубрякова 2006: 29):

Այդ մոտեցումը ձևավորվել է լեզվաբանության շրջանակներում սկզբնավորված ճանաչողական-խոսութային ուղղության զարգացման գործընթացում: «Այդ ուղղությունը հաղորդակցական, գործաբանական և խոսութային հարացույցների յուրահատուկ սինթեզ է» (Кубрякова 2000: 7):

Լեզվաբանական վերլուծության հիմնական նպատակը լեզվական միջոցների բացահայտումն է, որն էլ հիմք է հանդիսանում տեքստի իմաստն հասկանալուն թեմատիկ, գեղագիտական, խոսութային մակարդակներում;

Ժամանակակից մեթոդական և թարգմանաբանական գրականության մեջ ընդունված է, որ սինթետիկ ընթերցանությունը միտված է սովորեցնել հասկանալ տեքստի իմաստը, առանց այն վերլուծելու կամ թարգմանելու: Վերլուծական ընթերցանությունը

ենթադրում է ավելի բարդ տեքստերի վերլուծություն և թարգմանություն: Վերլուծական ընթերցանության ժամանակ սովորողներն ընկալում են տեքստը մանրամասնորեն:

Ակնհայտ է, որ գեղարվեստական տեքստը բարդ է նախ և առաջ այն պարագայում, եթե այն ադապտացված չէ, բնագրային է: Մի կողմից, ուսանողը ստիպված է լինում հաղթահարել բառապաշարը հասկանալու դժվարությունները: Մյուս կողմից, նա պետք է կարողանա բացահայտել գեղարվեստական տեքստի լեզվի գործաբանական առանձնահատկությունները

Գիտնականները վերլուծական ընթերցանության գործընթացը բաժանում են հիմնականում երեք փուլի: Ըստ այդմ՝ առաջին փուլում տեղի է ունենում բնագրի ընկալումը և հասկանալը: Երկրորդ փուլը վերաբերում է բուն թարգմանությանը, իսկ երրորդ փուլում թարգմանության արդյունքներն են խմբագրվում և վերլուծվում:

Հումանիտար հոսքում սովորող ուսանողներն ընդհանուր առմամբ պատկերացում ունեն այդ փուլերի մասին: Սակայն հատկապես երրորդ փուլը շատ հայտնի և անհայտ պատճառներով անուշադրության է մատնվում: Կարելի է առանձնացնել հետևյալ պատճառները՝

- չի բավարարում տվյալ դասանյութի յուրացման համար հատկացվող ժամանակը,
- ուսանողները մոտ ձևավորված չեն համապատասխան վերլուծական-հետազոտական աշխատանքի մշակույթ,

- դասախոսները չունեն համապատասխան մասնագիտական, մեթոդական իրազեկության մակարդակ:

Վերլուծական ընթերցանության ընթացքում նշված երրորդ փուլը հնարավոր չէ շրջանցել: Սակայն, անհրաժեշտ է ուսանողներին աստիճանաբար մտցնել մի այնպիսի գործընթացի մեջ, երբ ցանկացած օտարալեզու տեքստ ընթերցվում է որոշակի ընթացակարգերի պահպանմամբ, ռազմավարությունների կիրառմամբ:

Ակնհայտ է, որ ապագա բանասերները օտարալեզու բնագրերը ընթերցում են նախ և առաջ հասկանալու, բավականություն ստանալու, ինչպես նաև թարգմանելու և վերլուծելու նպատակներով:

Ռիթմիկ կամ կշռութային մակարդակում, սովորողները ուսուցման նախնական փուլում նպատակ են դնում ճիշտ հնչերանգով, շեշտադրությամբ, առոգանությամբ ընթերցել տեքստը: Կարևոր է հաջորդ ռեֆլեքսիայի փուլը, երբ նպատակն են դնում առանձնացնել գեղարվեստական տեքստի հիմնական ռիթմիկ միավորները, բացահայտել դրանց առանձնահատկությունները: Ռեֆլեքսիվ ընթերցանության տեխնոլոգիան նշված համատեքստում նպաստում է օտարալեզու գեղարվեստական տեքստի կշռութային դժվարությունների յուրացմանը:

Նպատակահարմար է ընտրել համապատասխան չափածո գործեր, որոնց կշռույթային վերլուծությունը նպաստում է անգլերենի հնչյունաբանության առանձնահատկությունների բացահայտմանը և յուրացմանը: Արդյունավետ է նաև համապատասխան բնագրերի,

այսինքն՝ լեզվակիրների կողմից հնչեցրած կամ ձայնագրած տեքստերի ունկնդրումը:

Կշռույթային վերլուծությունը նպաստում է հնչութային գիտակցության ձևավորմանը, որն անհրաժեշտ է ձևավորել դիդակտիկական գիտակցականության սկզբունքով: Նրանք պետք է ուսումնասիրեն անգլերենի հնչյունական համակարգը, հստակ պատկերացում ունենալով հնչյունական միջավայրի, հնչյունական նորմայի, տառադարձության, ուղղագրության, փոխներթափանցման, հնչյունատարբերակիչ նշանների մասին: Վերլուծության ընթացքում ուսանողները պետք է համեմատեն մայրենի և ուսումնասիրվող լեզուների հնչյունաբանական համակարգերը: Նրանք պետք է հնարավորություն ունենան բացահայտելու ուսումնասիրվող հնչյունների և հնչույթների արտաբերման առանձնահատկությունները: Կարևոր է կշռույթային վերլուծության համար անհրաժեշտ եզրույթները յուրացնել անգլերեն լեզվով, ուշադրություն դարձնել այն բոլոր եզրույթների վրա, որոնք առկա են մայրենի լեզվում, իսկ օտար լեզվի հնչյունաբանական համակարգում չունեն համարժեքներ:

Ռեֆլեքսիվ ընթերցանության տեխնոլոգիան հիմնականում կիրառվում է երեք փուլով: Առաջին փուլում առաջին պլան է մղվում ընթերցանության մոտիվացիա: Սովորողները հիմնականում հետաքրքված են օտարալեզու գեղարվեստական խոսքի հնչարտաբերական, հնչյունական առանձնահատկությունները բացահայտելով: Երկրորդ փուլում տեղի է ունենում իմաստի

ընկալումը: Այսինքն՝ ուսանողը խնդիր է դնում բացատրել տեքստում առկա հնչերանգային, կշռութային երևույթները: Երրորդ փուլում ուսանողը փորձ է անում ամփոփել ընթերցածը, այսինքն՝ ռեֆլեքսիա անել: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է պնդել, որ տեքստի իմաստը հասկանալու հմտության զարգացման համար միայն լեզվական գիտելիքները բավարար չեն:

Փաստ է այն, որ անգլերենի ուսուցիչները հիմնականում լավ են կատարում շարույթային վերլուծություն, որը ենթադրում է տվյալ տեքստի հիմնական միավորների տարաբաժանում՝ քերականական կառույցների սահմանները, հստակեցնելու, գլխավոր, երկրորդական նախադասությունները բացահայտելու, կետադրության առանձնահատկությունները հասկանալու նպատակով: Նրանք հիմնականում ներքևից վերև ռազմավարություն են կիրառում, փորձելով բացահայտել գեղարվեստական տեքստի քերականական, բառային, ոճաբանական առանաձնահատկությունները:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության ռեֆլեքսիվ տեխնոլոգիան արդյունավետորեն կիրառվում է ռիթմիկ, շարութային, իմաստաբանական և այլ բնույթի վերլուծություն իրականացնելիս: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ այդպիսի վերլուծությամբ հնարավոր չէ բացահայտել գեղարվեստական տեքստի ստեղծման արտալեզվական գործոնները: Այսինքն՝ նշված մակարդակներում հնարավոր չէ բացահայտել գեղարվեստական տեքստի խոսութային-գործաբանական առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանությունը չի կարող սահմանափակվել միայն քերականական, բառային, իմաստաբանական, ոճաբանական վերլուծությամբ։ Անհրաժեշտ է ամբողջացնել տեքստի վերլուծությունը խոսութային վերլուծությամբ։

Խնդիրն այն է, թե ինչ տեխնոլոգիա է արդյունավետ կիրառել գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանություն իրականացնելիս։ Գեղարվեստական տեքստը խոսույթի մակարդակում լրիվ այլ բովանդակային բնութագրեր է ձեռք բերում։ Ընթերցանությունն ավելի դինամիկ է դառնում։ Խնդիր է դրվում ընթերցանության բոլոր փուլերում ապահովել այդ շարժընթացը։

Շրջանառվում են տեքստի խոսութային վերլուծության տարբեր մոդելներ, որոնցից իր արդյունավետությամբ աչքի է ընկնում Ֆերկլոյի մոդելը, ըստ որի՝ արձակի խոսութային վերլուծությունը ունի երեք բաղադրիչ՝ «(1) տեքստի լեզվաբանական առանձնահատկությունները, (2) վերարտադրման գործընթացները և տեքստի կիրառումը (խոսութային պրակտիկա), և (3) ավելի լայն սոցիալական պրակտիկա, որին պատկանում է հաղորդակցական իրադրաձությունը (սոցիալական պրակտիկա)» (Филлипс 2008: 120)։ Առաջին բաղադրիչը ավելի շատ իր մեջ ներառում է ռիթմիկ, շարույթային, իմաստաբանական վերլուծության տեսակները։ Խնդրո առարկայի տեսակյունից վերլուծական ընթերցանության արդյունավետություն են ապահովում հատկապես երկրորդ և երրորդ բաղադրիչները, այն առումով, որ հնարավոր է դառնում ընդհանուր

պատկերացում կազմել խոսութային և սոցիալական պրակտիկաների մասին։

Գեղարվեստական տեքստի խոսութային-ռեֆլեքսիվ վերլուծության տեխնոլոգիան հիմք է դառնում տարբեր վերլուծական մեթոդիկաների ստեղծման և կիրառման համար։ Վ. Ե. Չերնյավսկայի մեթոդիկան այդ առումով կարելի է համարել տիպական։ Նրա մեթոդիկայի շրջանակում խնդիր է դրվում

- սահմանել տեքստի հիմնական (գեղագիտական) և լրացուցիչ գործառույթների իրականացման մակարդակը,
- բացահայտել կոմպոզիցիայի առանձնահատկությունները (թեմա, հիմնաբառեր, տեքստի ամուր դիրքեր) և վերլուծել համապատասխանությունը պատվածք գրելու կանոններին (ինտրիգների առկայությունը և դերը, պատմվածքի կերպարը, ապացույցների ներկայացումը և այլն),
- բացահայտել հաղորդակցության հիմնական ռազմավարությունները և դրանց արտահայտման միջոցները (տեքստի ներսում երկխոսություններ և հաղորդագրություն ուղարկողի և հասցեատիրոջ միջև հաղորդակցություն),
- իրականացնել արտալեզվական վերլուծություն (օգտագործված տերմինաբանության և ժամանակի շրջապատը նկարագրող բառապաշարի վերլուծություն),
- իրականացնել ներտեքստային վերլուծություն (տեքստերի որակի համեմատություն, համապատասխան ժանրի նորմերի

իմացության մակարդակի որոշում, ժամանակակից արձակի նշանների բացահայտում) (Чернявская 2012: 90):

Ճանաչողական-խոսութային կամ խոսութային վերլուծական տեխնոլոգիան հնարավորություն է ընձեռում իմաստավորել տեքստի առկա լեզվական միավորները, օբյեկտիվ լույսի ներքո ներկայացնել տեքստում բացահայտված ճանաչողական կառույցները: Նշված տեխնոլգիան կոչվում է նաև տեղեկատվության հաղորդակցական-գործաբանական և լեզվամշակութային ընդհանրացման մեթոդ (Голованева 2013: 16-17):

Կարևոր հանգամանք է նաև այն, որ այդպիսի վերլուծությունը բացահայտում է գործող հերոսների խոսքի ռազմավարությունները և մարտավարությունները, համապարփակ ներկայացնում է նրանց հաղորդակցության հաղորդակցական-ճանաչողական տարածքը և թույլ են տալիս համարժեքորեն ընկալել որոշակի իրադարձությանը ուղեկցող տեղեկատվությունն ու հանգամանքները:

Եզրակացություն

Գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության տարբեր տեխնոլոգիաներ են կիրառվում անգլերենի բանասիրական կողմնորոշման դասընթացում: Արագ ընթերցման, ռացիոնալ ընթերցանության, դինամիկ ընթերցման, քննադատական մտածողության զարգացման, ընթերցանության տարբեր ռազմավարությունների կիրառման, «CHANCE» արագ ընթերցման ճկուն, սինթետիկ ընթերցանության, տարբեր մակարդակներում

ռեֆլեքսիվ ընթերցանության, ճանաչողական-խոսութային, խոսութային վերլուծության տեխնոլոգիաներն ունեն իրենց առավելությունները և թերությունները։ Խնդիր է դրվում ամեն մի դասընթաց, դաս նախագծելիս և կազմակերպելիս, հստակեցնել գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության տեխնոլոգիան։ Կարևոր է, որ դասախոսները շարունակաբար զարգացնեն իրենց մեթոդական զինանոցը, ուսումնասիրեն նշված և այլ տեխնոլոգիաները։ Նշված տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտ և կարևոր պայման է օտարալեզու գեղարվեստական գրականության հետևողական ընթերցանությունը։ Ընդ որում, գեղարվեստական գործեր պետք է ընթերցեն թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները։ Արդյունվետ է դասընթացի սկզբում ներկայացնել ուսանողների ընթերցանության համար նախատեսված գրականության ցանկ։

Ընդ որում, արդյունավետ է, երբ ուսանողն ինքն է ընտրում նշված ցանկից այն նվազագույնը, որը պետք է ընթերցի։ Արդյունավետ է, երբ ամեն մի գեղրավեստական ստեղծագործության ընթերցումը սկսվում է ընթերցանության հստակ նպատակի և խնդիրների գիտակցումով։ Ակնհայտ է, որ ճանաչողական-խոսութային վերլուծական ընթերցանության տեխնոլոգիայի կիրառման համար պետք է իրականացնել լուրջ և հետևողական նախապատրաստական աշխատանք։ Այդ առումով, կարևորվում են թե՛ լեզվագիտական, թե՛ գրականագիտական աշխատանքների մայրենի և օտար լեզվով ուսումնասիրությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев, О. А. Техника быстрого чтения: Первая ступень: Программа «Доминанта 2000-го года»/ О. А. Андреев., Л. Н. Хромов. - М.: Прометей, 2007. - 160с.
2. Бородина, В. А. Теория и технологии читательского развитии в отечественном библиотековедении. В 2 ч. Ч.1. : Научные и методологические основы / В. А. Бородина. -М. : Школьная библиотека, 2006. - 336 с.
3. Ваганова М. Ю.Технологии повышения эффективности чтения: необходимость объединения достижений/Вестник ЧГПУ, №4, 2010. -С.12-24
4. Голованева М. А. коммуникативно-когнитивное пространство русской драмы конца XX века / Дисс. ... докт. филол. наук. – Волгоград, ВГСПУ, 2013. – 450 с.
5. Даринская Л. А. Возможности технологии аналитического чтения в развитии коммуникативной компетенции студентов// Ученые записки СПбГИПСР. Выпуск 1. Том 23. 2015. - С.102-108.
6. Загашев, И. О. Новые педагогические технологии в школьной библиотеке: образовательная технология развития критического мышления средствами чтения и письма / И. О. Загашев [текст] // Библиотека в школе. - 2001. - №17. - С. 56 - 59
7. Зиганов, М. Как повысить культуру, качество и скорость чтения [текст] / М. Зиганов. - М. : Школа рационального чтения, 2008. - 151с.
8. Кубрякова Е.С. Что может дать когнитивная лингвистика исследованию сознания и разума человека//Междунар. конгресс по когнитивной лингв-ке. Сб. мат-лов. - Тамбов, 2006. - С. 29-33.
9. Кубрякова Е.С. В начале 21 века (Размышления о судьбах когнитивной лингвистики)//Когнитивная семантика. Мат-лы второй международной школы-семинара. Часть 1. - Тамбов, 2000. - С. 7-10.
10. Селевко, Г. К. Современные образовательные технологии : учеб пос. [текст] / Г. К. Селевко. - М. : Народное образование, 1998. - 256 с.
11. Сметанникова Н.Н. Стратегиальный подход к обучению чтению. – М.: Школьная библиотека, 2005. – 512 с.

12. Филлипс Л.Дж., Йоргенсен М.В. Дискурс-анализ. Теория и метод: пер. с англ. 2-е изд., испр. Харьков: Гуманитарный центр, 2008. 352 с.

13. Чернявская В.Е. Дискурс власти и власть дискурса: проблемы речевого воздействия: учебное пособие. 2-е изд., стер. М.: Флинта: Наука, 2012. 128 с.

14. Anderson, L. W., Krathwohl, D. R., & Bloom, B. S. (2001). A taxonomy for learning, teaching, and assessing: a revision of Bloom's taxonomy of educational objectives. 41(4), 352//Retrieved from http://books.google.com/books?id=JPkXAQAAMAAJ&pgis=1.

15. Frank, Stanley D. (1994). *Remember Everything You Read: The Evelyn Wood Seven-Day Speed Reading and Learning Program*. Cambridge University Press. p. 40.

16. Golovanova M.A Cognitive-discursive analysis of the art of dramatic method text. -№5(45) 2016. -pp.23-34.

17. Paul, R., & Elder, L. (2007). Critical Thinking Concepts and Tools.pdf. 27th International Conference on Critical Thinking, pp. 1–21// Retrieved from http://web.iitd.ac.in/~nkurur/2015-16/IIsem/cml522/CriticalThinking.pdf